ՆԱԶԱՐ.– (Տէրտէրին տեսնելով) Հը՞…

ՏԷՐՏԷՐ.– Յաղթուել են, խնայիր, մեղաւոր են…

ՀՍԿԱՆԵՐ.– Բա՛շխի, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.– (Կասկածոտ նայում է տէրտէրին, հսկաներին եւ ապա գլխի ընկնելով ուշքի է գալիս) Հը՛մ, էսպէս էր եղել բանը: Ապրես, Քաջ Նազար: (Վախեցած մտիկ է տալիս Ղոռոբուղային:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Ճակատը գետնին զարկելով եւ բարձրացնելով), Քաա՛ջ Նա՛ազար, լսել էինք անունդ, քեզ չէինք տեսել… Շատ աղաչանք ենք անում, գաս դառնաս մեր մեծաւորը, մենք էլ կդառնանք քո ճորտը: Հրամայի, աշխարհք քանդենք, բերենք ոտդ: Մենակ բաշխի մեզ:

ՀՍԿԱՆԵՐ.– Բա՛աշխի,

ՆԱԶԱՐ.– Գեադա, ի՞նչ է ձեր աշխարհքի անունը:

ՏԷՐՏԷՐ.– Հսկաստան:

ՆԱԶԱՐ.– Հսկաստան: Լա՛ւ: Բաշխեցինք:

ՏԷՐՏԷՐ.– (Խաչակնքելով) Խաղաղութիւն ամենեցուն: (Ինքն իրեն:) Հազիւ ազատուեցինք: Օրհնեալ լինիս, ո՛վ քաջ: (Լռութիւն:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՛՛մ, Հրամա՞ն է, վեր կենանք, մեծաւոր:

ՆԱԶԱՐ.– Վեր կենա՞ք: (Մտածում է) Վեր կացէք ու…մի քիչ հեռու կանգնեցէք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Թուրդ հանի, մաա՛տաղ, տակովն անցնենք:

ՆԱԶԱՐ.– (Հանում է թուրը եւ հսկաներն անց են կենում:) Լռութիւն

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հիմի ի՞նչ կհրամայես, մեծաաւոր:

ՆԱԶԱՐ.– Ոչինչ չեմ հրամայում: (Դես դեն է նայում, որ հնար գտնի փախչելու: Ման է գալիս:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Հետեւում է նրան) Հիմի ո՞նց է ուզում սիրտդ: Աղուհացի սուփրան էստե՞ղ բաց անենք, թէ ներսը՝ ամրոցում, հա՛՛մ…

ՆԱԶԱՐ.– (Տարակուսանքով) Սուփրա՞ն: Էստե՛ղ բաց արէք: Էստեղ, ներսը մութ կլինի:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ոնց որ քեֆդ է, մաա՛տաղ: (Նազարի հետեւից ման գալով) Քա՛՛ջ Նազար: Չե՛ս նստում, մատա՛ղ:

ՆԱԶԱՐ.– Հը՞… (Նստում է եւ տարակուսանքով մտիկ տալիս հսկաներին:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Նստելով նրա մօտ եւ դառնալով միւս հսկաներին) Ինչ եմ ասում… Ճաշ պատրաստեցէք: Հա՛մմմ…

ՀՍԿԱՆԵՐ.– Աչքների՛ս վրայ: (Հեռանում են:)